



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.98

0-95

2802-10

338.98  
0-95

Ա. ՈՐՉՈՆԻԿԻՉԵ

ՀՆԳԱՄՅԱԿԻ Յ-ՐԴ ՏԱՐԻՆ  
ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՊԵՏԱՐԱՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ

Ա. ԱՐՁԵՎԻԿԻՑ

338.98

0-95

ար

ՀԵԳԱՄՅԱԿԻ Յ-ՐԴ ՏԱՐԻՆ

ՅԵՎ

1781 ՍՅԱՄԻՍՅԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Սցփակուական արգյունաբերուրյան մեջ աժխառողթերի  
համամիուրենական առաջին կոնֆերենցիալում 1931 թ.

հունվարի 31-ին նրասահմած նաոք



15985-57

ԽՍՀՄ Ա. Խ. Ա. Խաչատրյան

1931

ՅԵՐԵՎԱՆ

4 SEP 2013

32/31

ԿԵՆՍԱԳՈՐԾԵՆՔ „ՀԱՍՆԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ“, ՄԵՌ  
ԼՈԶՈՒՆԳԸ

Ընկերներ, յես մտադիր չեմ զբաղեցնելու ձեղ վորհե հաշվե-  
առու զեկուցաւմով։ Յես կզերադասեյի, վոր այստեղ ներկա գտնվող  
ընկերներն ինձնից առաջ խոսեյին և ապա միայն յես ողափեյի իմ  
հերթական խոսքով։ Սակայն դժբախտաբար այդպես չեղավ։ Ուս-  
տի ստիպված եմ կանգ առնել մի քանի ինդիբների վրա։

Հնդամյակի անցած յերկու տարիների հաջողությունները կան-  
խորոշեցին հնդամյակը չորս տարում կատարելու հնարավորու-  
թյունը։ Այդ հաջողություններն ուղղակի և անմիջական արդյունք  
են կոռունիստական կուսակցության և նրա կենտրոնական կոմի-  
տեյի վարած ճիշտ քաղաքականության։ Դուք ամենքդ ել կհի-  
շեք անչուշտ, ինչպիսի պայքար եյին մղում աջերը հնդամյակի  
շուրջը, ինչպիս եյին գոռզոռում նրանք, թե արդ հնդամյակը  
մեր ուժերից վեր ե, թե նա անիրադրելի յե։

Հնդամյակի տեղ ընկ. Ռիկովը յերկամյակ եր առաջարկում։  
1928 թ. աշնան նա համառորեն պնդում եր, թե մոտակա տարի-  
ների ընթացքում անհնարին և արդյունաբերության արտադրան-  
քի աճում տարեկան 21 տոկոսով։

Հենց այդ ժամանակամիջոցում ընկ. Բուխարինը հրատարա-  
կեց «Տնտեսագետի դիտողությունները» իր հոչակավոր հոգլու-  
ծը, վորտեղ նա առաջարկում եր մեղ հավասարվել նեղ տեղե-  
րին։ \*

Սովորային և կոլխոզային շինարարության նկատմամբ կու-  
սակցության ընդունած տեմպերը աջերի կողմից հայտարարվում  
եյին, իբր անիրադրելի։ Կուլակի դեմ ուժեղացված հարձա-  
կումն և ապա նրա վերացումը, վորսես դաստկարդի, վճռակա-  
նապես ժխտվում եր և նույնիսկ յենթագրություն կար կուլու-  
կին աղատել անհատական հարկումից։

Հնդամյակն իրագործելու համար վարած յերկամյա պայքա-

բը և նրա արդյունքներն ի դերեւ հանեցին աջերի բոլոր մարզա-  
րեցությունները։ Նրանք գուրս յեկան նույնպիսի քաղաքական  
բանկրատները, ինչպես դրանից առաջ և տրոցիբանները։ Ի դեմ՝  
տրոցիբանները և աջերը համերաշխ են մեր հնարավորություննե-  
րի, մեր ժողովրդական տնտեսության զարգացման հնարավոր  
արձակերի դնահատման տեսակետից։ թե սրանք և թե նրանք անի-  
շագործելիք, մեր ուժերից վեր եյին համարում մեր ընդունած  
տեժպերը։ Հակառակ այս բոլոր պնդումներին, ներկայումս մենք  
չառ ենք առաջ դնացել հնդամյակի նշած թվերից։

Ծառանալու չեմ այստեղ նաև այն հանդամանքի վրա, թե  
վո՞ր չափով արդարացան այն «մարզարեյությունները», վո՞ր  
անում եյին բուրժուական մամուլը, բուրժուական տնտեսազեւ-  
ները, նաև վտարանդի սպիտակ-վլարդիականներն ու Ա Ի-  
տերնացիոնալի «Հերոսները»։ Զնայած նրանց հանած ազմուելին  
մեր սովորական, հերթերի մասին և այլն, նրանք ներկայումս  
սուբյուտ են խռոտվանել, վոր հնդամյակը բայց վիճեներից  
հաջորդում եւ։

Ցեվ այդ կատարվում եւ զուգընթաց կապիտալիստական յեր-  
իբներում տիրող ամենալաման տնտեսական ճշնաժամին, վորի  
հետեւանքն են հանդիսանուամ գործազրկության հոկտայիկան ա-  
ճումը և արտադրության սաստիկ կրծատումը։ Միայն Ամերի-  
կայում գործազրկների թիվը 10 միլիոնի յէ հասնում, Անդիս-  
յում՝ ավելի քան 2.600 հազարի, Գերմանիայում՝ 4.600 հազա-  
րի։ իսկ յեթե ավելացնենք դրան և այն բանվորների թիվը, վո-  
րոնց նրանք մասնակի գործազրկություններ են անվանում, մենք նո-  
րանոր մէլիոններ կատանանք։

Իսկ Խորհրդային Միությունը վոչ միայն աղաւա և արդեն  
գործազրկությունից, այլև սուր կարիք և գործ բանվորական  
ուժի։

Ցեթե դուք նայեք թե ինչպես և ընթանում նրանց մոտ ար-  
դյունաբերական արտադրանքի «աճումը», սաացվում և նույ-  
պես բավականին պարզուց մի սատկեր։ Առենակ, չուպունի Ա-  
կառամաժը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝  
1930 թ. հոկտեմբերին, համեմատելով 1929 թ. հունիսի հետ,  
ահանում ենք՝ նվազում 27,2 տոկոսով, վոչ թե ահան, այլ նվա-  
զում։ Անդիմայում՝ նվազում 26,4 տոկոսով, Գերմանիայում՝

27,4 տոկոսով, Ֆրանսիայում՝ 8,3 տոկոս։ Ամենուրեք նվազում։  
Ցեթե վերցնենք պողպատի արտադրությունը, կտեսնենք նույ-  
նը։ Ամերիկայում պակասել է 39,4 տոկոսով, Անգլիայում՝ 25,3  
տոկոսով, Գերմանիայում՝ 41,7 տոկոսով, և Ֆրանսիա ուժ՝  
± 9 տոկոսով։ Ինչ ուզում են, թող խոսն նրանք, այսուամհնայ  
նիվ ստիգմած են խռոտվանել, վոր նրանց մոտ աճման փոխա-  
րեն գոյություն ունի ամենասաստիկ անկումը։

Նայենք այժմ, ի՞նչ ե տալիս անցած 2 տարվա համերադո-  
մարը։ Յես առաջ կըերեմ մի քանի թվեր միայն, ըստ հնդամ-  
յակի արդյունաբերության մեջ 2 տարվա ընթացքում կատարու-  
ներդրումների գումարը նախատեսվում եր 3.990 միլ. ո., փառ-  
առողջն ներդրվել է՝ 4.600 միլ. ո.։ Գյուղատնտեսության մեջ 2  
տարվա ընթացքում յենթադրվում եր կապիտալ ներդրում կատա-  
րել 1.700 միլ. ուութ., փաստորեն ներդրվել է՝ 2.397 միլ. ո.,  
արանիսպորտի մեջ նախադվյած եր 2.500 միլ. ո., փաստորեն  
ներդրվել է՝ 2.688 միլ. ո., ընդամենը համայնացված սեղտորի  
մեջ փոխանակ 12.600 միլ. ո., ներդրվել է 13.762 միլ. ո.։ Բոտ  
հեղամյակի արդյունաբերական արտադրանքը պետք է կարգեր  
2 տարվա ընթացքում 29.300 միլ. ո., իսկ սուացել ենք 30.450  
միլ. ո.։ Ծանր արդյունաբերության դժով 12.764 միլիոնի տեղ  
սուացել ենք՝ 13.764 միլ. ։

Յես կանգ չեմ առնի, ընկերներ, այլ թվերի վրա։ Նրանք  
ձեզ հայտնի յեն։

Ցանքսերի տարածությունը յեթկու տարվա ընթացքում ա-  
ճում է տվել՝ 10 միլ. հեկտար, սովորողներն ու կոլխոզներն աճել  
են հոկտայիկան չոփենորով։ Հացահատիկային ըրջաններում մենք  
ներկայումս ունենք մոտ 50 տոկոս կոլխոզիվացում, 43 միլիոն  
հեկտար կոլխոզիվացված տարածությունից մենք սուացել ենք  
ընթեք փոխանակ 20 միլիոնի, վոր յենթադրվում եր 1933 թ., այ-  
սինքն՝ հնդամյակի վերջերքին, —ավելի քանի կրկնապատիկը։

Բանվորների թիվը՝ 1930 թ. արդյունաբերության մեջ աճել  
է 700 հազարով, աշխատավարձը՝ 2 տարվա ընթացքում՝ 12 տո-  
կոսով։ Մախսերը սոցագի գծով հավասար են 1.600 միլ. ո.,  
7-ժամյա աշխատանքի յեն անցել 1930 թ. վերջերքին արդյունա-  
բերական բանվորների 45-5 տոկոս։ Անընդհանը ընթերկել ե  
րանվորների 69,8 տոկոսը։ Ահա մի քանի թվերով 2 տարվա մեր

Համբագումարը: Այնուամենայնիվ 1930 թվի մեր ծրագիրը մենք չենք կատարել: Արտադրանքի աճման 32 տոկոսի փոխանակ մենք ունենք միայն 25 տոկոսը: Ինքնարժեքի իջեցման բնագավառում 11 տոկոսի տեղ մենք ունենք միայն 7 տոկոս: Կապիտալ շինարարությունը կատարված և մեր պլանի 80 տոկոսի չափով: Ահա թե ինչ բազաժով ենք մտել մենք 1931 թվի չեմքը: 1930 թ. ծրադիրը մենք լրիվ չենք կատարել, սակայն հնդամյակի ուրվագիծը դերակատրել ենք:

## ՀԵԳԱՄՅԱԿԻ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐԻՆ

1931 թվի ստուգիչ թվերը մեր Միության սոցիալիստական շինարարության ասպարեզում հետագա հակայական քայլ են համարկում դեպի առաջ:

Համայնացված սեկտորի համար այս տարի կապիտալ ներդրումները ծրագրված են 17 միլիարդ ռուբ. չափով՝ անցյալ տարվա 10 միլիարդի տեղ:

Ամբողջ սոցիալիստական արդյունաբերության համար, ներառյալ նաև ելեկտրոֆիկացիան, ներդրումները վորոշված են 7.470 միլիոն ռ. գումարով, վորոնցից 6.750 միլ. ռ. ընկնում և Ժ.Գ.Խ.-ի կողմից պլանավորվող արդյունաբերության նաև ելեկտրոֆիկացիայի վրա:

Տրանսպորտի համար ծրագրված է՝ 3.185 միլ. ռ., գյուղատնտեսության համար՝ 3.800 միլ. ռ.:

Գյուղատնտեսության բնագավառում մեր առաջ դրված է՝ Հյուսիսային կովկասում, Ռէկրայինայում (տափաստան), Ներքին և Միջին Վոլգայի վրա գյուղատնտեսության կոլեկտիվացումը հասցնել մինչև 80 տոկոսի և ցանքսերի տարածության ընդհանուր ծավալը՝ մինչեւ 143 միլ. հեկտարի:

Ընթացիկ տարվա բյուջեն վորոշված է՝ 21.200 միլ. ռ., իսկ ամբողջ Փինանսական պլանը՝ 31.100 միլ. ռ.:

Հնդհանուր հասկացումները լուսավորության, կառուցքի, առողջապահության և սոցակի համար՝ 6.500 միլ. ռ., վորոնցից միայն սոցիալական ապահովագրության համար՝ 2.138 միլիոն ռուբլի:

Գալով արդյունաբերության խնդիրներին, մենք մի բուժանդամ չպետք է մոռանանք, վոր ամբողջ ժողովրդական անուե-

սության սոցիալիստական վերակառուցման գործում արդյունաբերությունը առաջատար դեր է խաղում:

Արդյունաբերությունն է, վոր հիմք և հանդիսանում համայնքով վարդապետական տնտեսության հաջող զարգացման համար: Զի կարող գյուղը սոցիալիստորեն կերպարանափոխվել առանց արդյունաբերության ուժեղ զարգացման, վորը հենց և պիտի տանհարժեցաւ աելմիքական հիմք սոցիալիստական յերկրագործության համար: Զիան նաև ժողովրդական տնտեսությունն անխափան արասարկով տրանսպորտ, առանց բուռն կերպով աճող արդյունաբերության, վորը տրանսպորտին մատակարարեր շոգեմեքենաներ, վաղոններ, ռեյլսեր:

Կուսակցության և կառավարության սույն վորոշման համաձայն՝ առաջադրված է՝ 1931 թ. ընթացքում տալ յերկրին 25.7 միլիարդ սուբլու արտադրանք, իրացնել կապիտալ շինարարություն՝ 6.750 միլ. ռ., իջեցնել ինքնարժեքը 10 տոկոսով, իջեցնել շինարարության արժեքը 12 տոկոսով, բարձրացնել աշխատավարձը 6 տոկոսով:

Խնչակեա տեսնում եք, կուսակցության և Խորհրդային կառավարության այս վորոշումը բոլոր տնտեսավարների, արդյունաբերության մեջ բոլոր աշխատողների վրա ամբողջ յերկրի առաջ հակայական պատասխանատվություն է դնում:

Ստուգիչ թվերը կազմված են այն հաշվով, վոր հնդամյակը մենք կատարում ենք 4 տարում, իսկ արդյունաբերության միշտք ճյուղերում 4 տարում մենք վոչ միայն կատարում ենք այդ հնդամյակը, այլև զերակատարում ենք այն:

Արդյունաբերության բնագավառում 1931 թվի կապիտալ շինարարության ծրագիրը հաստատված է՝ 5.5 միլիարդ ռ. գյուղատնտեսությունը, չհաշվելով ելեկտրաշինարարությունը, և կամ 6.2 միլիարդ ռ., 1929-30 թվի գներով, 1929-30 տարում փասորին ծախսված 3.1-3.2 միլիարդ ռ. դիմաց: Դա կրկնապատկումից ավել և գուրս գալիս: «Ա» խմբակի մեջ ներդրում ենք կատարում 5 միլիարդ՝ անցյալ տարում ծախսված 2.5 միլիարդի դիմաց: «Բ» խմբակի մեջ՝ 255 միլիոն ռ.՝ 1929-30 տարվա 284 միլիոն ռ. տեղ, չհաշվելով այստեղ թեթև արդյունաբերության

այն մասը, վոր մատակարաբման ժողովրդական կոմիտեի առքենին ե անցել:

Արդյունաբերության առանձին ճյուղերի մեջ այս գումարը բաշխված է հետեւյալ կերպ՝

մե մետալուրգիա (կոկսի հետ միասին)՝ 1.068 միլ. ո.՝  
29/30 թ. 462 միլ. ո. դիմաց—աճում՝ 131 տոկոսով:

Վառելիք՝ 900 միլ. ո. 29/30 թ. 644 միլ. ո. դիմաց—աճում՝  
40 տոկոսով:

Ծանր մեքենաշինարարություն՝ (չողեկառք, վագոն, դի-  
ղել, դադարակ)՝ 369 միլ. ո.՝ 29/30 թ. 118 միլ. ո. դիմաց—  
աճում՝ 210 տոկոսով:

Ավտոշինարարություն՝ 207 միլ. ո. (այսուղ պետք է ազ-  
լացնել նաև Զելքաբինակի գործարանի վրա ծախսվելիք 50—60  
միլ. ո.)՝ 29/30 թ. 172 միլ. ո. դիմաց—աճում՝ 50 տոկոսով:

Ելեկտրոտեխնիկա՝ 88,4 միլ. ո.՝ 61,8 միլ. ո. դիմաց—  
աճում՝ 42 տոկոսով:

Քիմիա՝ 367 միլ. ո.՝ 188 միլ. ո. դիմաց—աճում՝ մոտ 140  
տոկոսով:

Գունավոր մետալուրգիա՝ 249,4 միլ. ո.՝ 1929/30 թ. 89,6  
միլ. ո. դիմաց—աճում՝ 178 տոկոսով:

Ելեկտրաշինարարություն՝ 803 միլ. ո.՝ 29/30 թ. 313 միլ.  
ո. դիմաց—աճում՝ 156 տոկոսով:

Բացի այդ, կազմված է ԺՏԿ-ի բեղերվ՝ 500 միլ. ո. գու-  
մարով:

Արդյունաբերության գծով նշված կապիտալ աշխատանքնե-  
րի ընդհանուր պլանից նոր սկավող շինարարության վրա ծախ-  
սվում է 445 միլ., և 95 միլ. ո.՝ գործություն ունեցող գոր-  
ծարանների ընդլայնման և վերակառուցման նոր աշխատանքնե-  
րի վրա:

Արտադրական պլանը նշվում է հետեւյալ կերպով.

ԺՏԿ-ի կողմից սլանամբովով արդյունաբերության բնա-  
դաշտառում՝ 25,7 միլիարդ ո., (1926/27 թ. գներով). «Ա» խմբա-  
կում՝ 17,5 միլիարդ ո., ընդում 1930 թ. 10,8 միլիարդ ո., «Բ»  
խմբակում՝ 8,2 միլիարդ ո. ընդում 1930 թ. 6,6 միլիարդ ո.:  
Դա նշանակում է արտադրանքի ընդհանուր աճում՝ 46 տոկոսով,  
—«Ա» խմբակի գծով՝ 62 տոկոսով, «Բ» խմբակի գծով՝ 20 տո-

կոսով: Բնդ տմին մեքենաշինարարության արտագրանքն աճում՝  
և 86 տոկոսով, ելեկտրոտեխնիկային՝ 65 տոկոսով, քիմիայի-  
նը՝ 86 տոկոսով, շինանյութերինը՝ 79 տոկոսով, շուգունինինը՝  
50 տոկոսով, կոկսինը՝ 49 տոկոսով, քարտածինը՝ 47 տոկոսով,  
նավթինը՝ 35 տոկոսով: Ընդ ամին պետք է հիշատակել այսուհետ,  
վոր արդեն ստուգիչ թվերի հաստատումից հետո ԺՏԿ-ը վորո-  
ւեց նավթարդյունաբերության ծրագիրը ավելացնել ևս 2 միլ.  
ո., ուստի և նավթային արտադրանքի աճումը կտոսացիկ 45 տո-  
կոսով:

Ինչ եր մեր յելակետը կապիտալ շինարարության համար  
ՀՀՀյալ 5,5 մելիորդ ո. բաշխելիս:

Յերբ մենք հարց հարուցինք, թե ինչպես պիտի կազմվեն  
ստուգիչ թվերը, ինչի՞ վրա պետք է դիմակորապես հենցել, ա-  
յսաջին նպատակը, վոր մենք մեր առաջ դրինք, դա այն եր, վոր  
ապահովենք իուսակցության 16-րդ համագումարի վորոշման կո-  
տարումը՝ 1933 թվին ունենանք 17 միլ. տոնն չուզունք Դուք  
ամենք ել զիտեք, թե վորչափ մեծ և մեղանում մետաղի կարի-  
քը: Մետաղը մեզ չի բավականացնում և մենք ստիպված ենք ներ-  
մուծել այն արտասահմանից: Մեր վողջ հետազա դարձացնում  
թե դյուզատնեսության, թե մեքենաշինարարության և թե փո-  
խադրության բնագավառում զեմ և առնում մետաղին. և ահա  
մնչու կուսակցության 16-րդ համագումարը հարցն արդիուն ուր-  
բեց, վոր հնդամյակի վերջին մենք ունենանք 17 միլ. ո. չու-  
զունք:

Յերկրորդ նպատակը, վորը մենք մեր առաջ ենք զիտել և զո-  
րի իրադրումը անհրաժեշտ սրբածանում առաջին  
խնդիրը լուծելու համար, —զա, ընկերներ, այն և, վոր 1931 թ.  
մենք առավելացնում չափով պիտի ավարտենք կառուցվող ձևո-  
նարկությունները և սկսենք շահագործել դրանք: Այդ ուղղու-  
թյամբ վործը մեղանում հետեւյալ պատկերն և տալիս: Ներկա-  
յումն շարունակվող շինարարության մեջ մենք՝ ունենք ներգրաւմ-  
ներ 4 միլիարդ ուղղուց ավել: Գուռք հիշում եք, ինչպես «Արգ-  
կուսակցության» («Պրոմպարտիա») գատակարության ժամանակ  
ընասարար Ռամզինը և նրա ընկերները մեղ պատմում եյին, վոր  
նրանք վարում եյին կապիտալիները «մեղնելու» քաղաքականու-  
թյունը: Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր այնպիսի հսկաները,

ինչպես Մադնիտուրբակ, կուղնեցկ, Դնեպրոպետրովսկի եւեք-  
տրակայան, Սվիրի ելեկտրակայան և այլն, չենք կարող ավար-  
տել մի տարվա մեջ, և այդ կողմից միջոցների շաղկապը վորոշ  
ժամանակով անխուսափելի յէ գտնում: Սակայն աներկրա յէ և  
այն, վոր միջոցների շաղկապումը չափազանց յերկար և տևում,  
վոր նրանք ցաք ու ցըիլ են լինում, վորպիսի հանդամանքը չի  
բղիում տեխնիկական անհրաժեշտությունից: Ուստի այս տարրում  
մենք վճռել ենք ձեռնարկել նոր շինարարությունների միայն  
սահմանագիրակ, նվազագույն, ամենաանհրաժեշտ չափերով, իսկ  
միլիարդները ներդրել արդեն կառուցվող, գեռ չորվարտված  
ձեռնարկությունների մեջ և ավարտել այն հենց այս տարրում:  
ԺՏԳԽ-ի կողմից պլանավորված արդյունարկության հիմնական  
դորձող կազիտալը կազմում է մոտ 9 միլիարդ ռ.: Այս տարի  
մենք մտադիր ենք դորձի գցել—իսկ այդ լիովին և ամրապնդին  
կախված ե մեր և ձեր աշխատանքից—մոտ 4 միլիարդ ռ.: Դա  
կեսն է մոտավորապես մեր ունեցածի: Դուք կարող ենք ձեզ պատ-  
կերացնել, թե ի՞նչ հնարավորություններ դա մեզ կտա 1932 թ.-  
համար, յեթե մենք կարողանանք լուծել այս հսկայական պրոբլե-  
մը, յեթե հենց այս տարրում դորձի գցվի մի նոր հիմնական կա-  
պիտակ 4 միլիարդի չափով, ալելի լավ սարքավորված դորձա-  
ռանների, ավելի լավ տեխնիկայի պայմաններում:

Սակայն այս դեռ պետք է կատարել, ընկերներ, և կատարել անդերապահորեն, չնայած բոլոր դժվարություններին։ Այդ առաջադրանքը ի կատար ածելու համար մենք պիտի լարենք մեր ամբողջ յեռանդը և անհապաղ վերացնենք այն բոլոր արդգելքները, վարոնք գոյանում են մեր աշխատանքը թերի լինելու չնորսի։

Յերբորդ մեր անելիքն եւ ասամբելագույն չափով ազատագրել  
մեր Միությունն այն կախումից, վոր նա ունի կապիտալիստա-  
կան յերկրներից ներմուծման գծով։ Ամենքիս համար հասկա-  
նալի յէ, վոր արտասահմանից ստիպված ենք յեղել ներմուծել  
մինչեւ այժմ և դեռ պիտի ներմուծենք հետագա տարիների ըն-  
թացքում ահապին քանակությամբ մեքենաներ և սարքավորման  
առարկաներ, մենք վոր ի վիճակի կլինենք մեր մեքենաշինարա-  
րությունը վոտքի կանգնեցնել, մինչեւ վոր կարողանանք մեր սե-  
փական յերկրում կառուցել այն բոլոր մեքենաները, սարքավոր-

ման պարագաները, դազգյահները, վորոնց կարիք ունենք: Բայց  
մենք ներմուծում ենք այսպիսի ապրանքներ, ինչպես, որինակ  
անկիզ աղյուս, զա արգելն կատարյալ խայտառակություն է: Յեզ  
ներմուծել ենք վոչ թե կոպեկների, այլ մի քանի միլիոն վոսկի  
ուուրլիներէ: Մենք ներմուծում ենք արտասահմանից բարձաթիվ  
այսպիսի ապրանքներ, վոր մենք ինքներս ունենք: Կարելի յեւ և  
հարկավոր եւ, վորսպազի նրանք ինչ ել վոր լինի մեղ մոռ պատ-  
րաստվեն: Անթույլատրելի յեւ, յերբ մենք ներմուծում ենք ար-  
տասահմանից այսպիսի մեքենաներ, վոր հնարավոր եւ շինել հենց  
մեր յերկրում: Դեռ մի սարի սրանից առաջ մենք պայքար եւ ինք  
մղում այն հարցի չուրջը, թե հնարավո՞ր եւ արդյոք մեր յեր-  
կրում պատրաստել յերկաթե կոնսորտկցիաներ, թե՞ այդ պետք  
եւ ներմուծենք արտասահմանից: Այդ մասին այժմ մեզնից վոչ  
վոք չի վիճում: Յերկաթե կոնսորտկցիաների մեր ունեցած  
ահագին կարիքը մենք բավարարելու յենք սեփական գործարան-  
ների արտադրությամբ: Այս տարի մենք վճռել ենք, վորքան կտ-  
րելի յեւ լավ և լայն հիմունքների վրա դնել պազդյահներ և դրս-  
ծիքներ պատրաստելու գործը մեզանում: Յեզ այդ անում ենք  
այն հաշվով, վորպազի այս տարում կառուցվող գործարաննե-  
րը, վորոնք այս տարի յել պիտի ավարտված լինեն, արդեն իսկ  
1932 թվին կարողանան մեղ տալ մեր սեփական սովետատկան ար-  
տադրության պատրաստ դադյահներ: Նույնը և գործիքների  
ներսում ամբ:

Ահա այս անելիքները, վորոնցից մենք յենում ենինք, յերբ  
վորոշում էինք, թե վորքան ներդրում և վո՞ր ճյուղին պիտի  
Հատկացվի: Կան, ճիշտ ե, անձինք, վորոնց այդ չի բավարարում:  
Առաջինում են, վոր քիչ ենք ավել նրանց, չնայած, վոր այս տա-  
րի գրեթե յերկու անգամ ավել ենք տալիս: Սեղ մետաղաշինա-  
բարության և մեքենաշինարարության հետ միասեղ այս տարի  
մենք շատ ուժեղ կերպով առաջ ենք քաշում գունավոր մետաղուր-  
դիան, վորոնց ետևու նրա՝ մինչև այժմ ունեցած՝ աճումը բնավ  
բաժարար չե: Այս բնագավառում մեր անելիքը պիտի լինի՝ 1931  
թ. առև 150 հազար տոնն պղինձ, փոխանակ 1930 թ. տված 44  
հազար տոննի: Ամբողջ հասարակայնությունը, հանքերի և գոր-  
ծարանների բոլոր բանալորները, ի թիվս նրանց և «Յմբառմետո-  
լուսի» («Գունամետավուկու») նախագահ ընկ. Սերեբրովսկին,

իրենց ամուսը բայլէիկան խստքն են ավել, վոր լրիվ կէառարեն ծրագիրը, տալով մեղ 150 հազ. տ. պղինձ: Էավ մթաներս ոլահենք արյ և սպառենք լի Հավատով, վոր այս տարիքա ընթացքում, ամուս ամիս, յեռամսյակից յեռամսյակ, կաճի ու կուժեղանա պղինձի արտադրությունը: Դա հնարավորություն կտա մեղ այժմյանից ավելի լայն չափով զարգացնել մեր ելեքարուսկինեկարան արդյունաբերության աշխատանքները և առատել մեր յերկիրը այն տասնյակամոր միլիոն վոսկի ոռոքությունը, վոր մենք ստիպված ենք վճարել արտասահմանին:

Հատուել տեղ և գրավում վառելիքի հարցը:

Հնդամյակի վերջերքին նախագծված եր ընդամենը 70 միլ. տոնն ածուխ, իսկ այս տարում մեր առաջ ծառացած և խնդիր՝ ստանալ 83,6 միլ. տոնն ածուխ: Ուրեմն, արդեն իսկ այս տարում մենք պետք ե գերակատարենք հնդամյա ծրաշիրը:

Հնդամյակի վերջին տարում մենք նախագծել ելինք ստանայ 21,7 միլիոն տոնն նազիթ, իսկ այս տարի արդեն մենք նպաստակ ենք դնում՝ ստանալ 27,5 միլ. տոնն: Չնայած դրան, վառելիքը մեղ չի բարականացնում:

Ճիշտ ե, ածխահնությունը առայժմս դեռ չափից դուրս վաս և ընթանում: Սուաջին յեռամսյակի առաջին ամսիւ առաջին որերը վաս են ընթանում, սակայն և չնայած զրան ածխի, նույնին, տորֆի, թերթաքարի և փայտի պատրաստման ծրադիրները պետք ե անապայման և ամբողջությամբ կատարվեն: Անիրադուծելի, ուժերից վեր այդտեղ վոչինչ չկա: Ամեն ինչ կախում ունի միայն մեր կադմակերպվածությունից, մեր աշխատանքեց:

Ի լրումն, այս որերս Ժ. Ֆ. Մշակեց թե այս տարիա և թէ 1932 և 1933 թ. թ. համար վառելիքի արտադրական նոր ընդդարնած ծրագիրը, վորը և սուաջարկված և կառավարությանը: Մեր ժող. անսեսության զարգացման հակայտական թափն ահագին քառակությամբ վառելիք և պահանջում: Կուսակցության և կառավարության կողմից մեղ առաջադրած ծրադիրը կատարելու դեպքում 1931 թվի վերջին մենք կատանանք ժողովրդական տնտեսության հետեւյալ պատկերը, վոր հետաքրքրական և համեմատել հնդամյակի հետ:

Հնդամյակի վերջին մենք պիտի ստանայինք ընդհանուր արտադրանք՝ 26.287 միլիոն, այս տարիա վերջը մենք ստանալու

թնք՝ 25.743 միլիոն, ուրեմն մոտ 500 միլիոն և պակասում, վոր պետք կատարենք հնդամյակը արդյունաբերական արտադրանքի ընդհանուր չափի մեջակետից:

Եյս տարվա համար հնդամյակով ծրագրվում եր 16,4 միլիարդ բոլանդակալ արտադրանք: Նազիթի գծով, ինչպես ասացի, մենք գերակատարում ենք հնդամյակը. իսուսու այն ծրագրային թվերի մասին չե, վորոնք վորոշված ելին 1931 թվի համար, այլ այն թվերի մասին, վորոնք նախատեսնված ելին 1933 թվի համար: Քարածիրի գծով՝ նույնը: Զուգունի բնագավառում մենք գերակատարում ենք ըստ հնդամյակի 1931 թվի համար նախատեսնված ծրագիրը. նախատեսնված եր 6,2 միլիոն տոնն, իսկ մենք նախատեսել ենք 8 միլիոն տոնն: Մետաղի գծով՝ նախատեսնված եր 6,4 միլ. տոնն, իսկ մենք ստանալու յենք 8,8 միլ. տոնն: Մետաղաքաշի (աղբովատի) գծով՝ նախատեսնված եր 4,9 միլ. տ., իսկ պիտի ստանանք՝ 6,7 միլ. տոնն: Տրակտորների նկատմամբ նախատեսնված եր՝ 53 հազ. հատ 1933 թվի համար, մինչդեռ հենց այս տարում մենք պիտի ստանանք 56 հազ. հատ: Ճեմենուի հենց այս տարում մենք պիտի ստանանք վերջին 40 միլ. տակառ, մինչդեռ այս տարում արգեն ստանալու յենք 35 միլ. տակառ: Սղոցանյութերից նախատեսնված եր 30 միլ. խոր. մետք և ստանանք 30,5 միլ. ի. մ.: Գաղով բամբակեղեն գործվածքին, մենք այստեղ հետ ենք մնում. հնդամյակի վերջին տարվա համար նախատեսնված եր 4.588 միլ. մետք, իսկ ընթացիկ 1931 թվի համար՝ 3,636 միլ. մետք, մինչդեռ մենք ունենք միայն 2.835 միլ. մետք: Այդ հետամնացությունը բացարձում և հումքի պակասությունով: Մեր գործարանները հումքումակե են վերաբակելու ավելի մեծ քանակությամբ հումքումակե: Վունաման՝ 1933 թ. նախատեսնված եր բառ հնդամյակի տակ 80 միլ. զույգ: Այս տարում պիտի ստանանք 84,6 միլ. զույգ: Համայն մեղենաշինաբարության գծով՝ 1933 թ. համար նախատեսնված եր 2.059 միլ. ուրեմու արտադրանք, մինչդեռ հենց այս տարում մենք պիտի ստանանք 2.457 միլ. ո. : Գյուղատնտեսական մեղենաշինաբարության բնագավառում՝ հնդամյակի մեջին առաջնային տարում 610 միլ. ո., մինչդեռ, այս տարում մենք պիտի ստանանք 815 միլ. ո. : Ելեքտրոսեխնիկայի գծով՝ 1933 թ. համար նախատեսնված եր 895 միլ. ո. արտադրանք, իսկ այս

ստարում պիտի ստանանք 972 միլ. ռ.: Ելեքտրոեներգիայի բնագավառում՝ հնդամյակով 1931 թ. համար նորթառութեանված՝ 13,3 միլիարդ կիլովատ-ժամի փոխարեն մենք այս տարի պետք է տանք 12,7 միլիարդ կիլովատ-ժամ և այլն և այլն:

Ինչակես տեսնում եք, արդյունաբերության քաղաքաթիվ ճյուղերում մենք հնդամյակը գերակատարում ենք, տակայն այս դեռ նախադանք են, լոկ ծրագիր, լոկ ասուղիչ թիվը: Այսոր հունվարի 30-ն են մեր առաջ ունենք դեռ 11 ամիս աշխատանքի համար: Այդ ճիշտ են, սակայն կարենոր են նշել, վոր արդեն անցել են 30 որ, արդյունաբերության աշխատանքի 30 որ այս նոր տարում: Ամենայն վճռականությամբ պետք են նշել այստեղ, վոր 1931 թվի ծրագիրը կատարելու համար անհրաժեշտ տեմպը այն անցած 30 որերի ընթացքում մենք չկարողացանք վերցնել: Պետք են գործել արագ և հաստատ, առանց մի որ կորցնելու: Յուրաքանչյուր որ, յերբ ծըրագիրը չի կատարվում, բարդացնում և դժվարացնում են հետեւյալ որովա աշխատանքը:

Դուք, իհարկե, կարող եք ինձ ասել, վոր այդ մեղքն ընկնում են տրանսպորտի վրա, վոր մենք դեռ մետաղ չենք ստացել, վոր հայթայթման գործը կաղում են: Դրա մեջ մեծ չափով կա ճշմարտություն և մենք այստեղ պետք են որդհրդակցենք, թե ինչպես պետք են կազմակերպվենք, մեր ունեցած միջոցները մեծագույն արդյունքով ողտագործելու համար: Մեղանում շատ հաճախ են սրբագրում, յերբ մի գործարանում թափված են լինում ամենանհրաժեշտ դեֆիցիտային մետաղից մի քանի ամսավա պաշարներ, վոր գործարանը չի ողտագործում նա նրան պետք չեն: Իսկ կողքին մի ուրիշ գործարան այդ մետաղից չունի և մենք անընդունակ ենք գտնվում վերաբաշխելու այն, ինչպես հարկն են:

Մեր առջեվ ծառացած ինդիքները ինքնահսուլ չեն, վոր պետք լուծվեն: Անհրաժեշտ են ամենայնպուն մորիլութացիան՝ ամբողջ կուսակցության, ամբողջ բանվոր քասակարգի, բալոր գործարանների, հանքերի աշխատավորների: Յեզ ներկա կոնֆերենցիայում մենք ամենայն ալարգությամբ, բայց ինքնիկորեն, պետք են նշենք մեր տնտեսական ասլարատի ունեցած բոլոր թերությունները և միահամուռ ուժերով նախադենք նբանց վերացման ուղիները:

Բացի ինդրի ընդհանուր քննությունից, մենք պետք են կադ-

մակերպենք սեկցիաներ և այնտեղ, այդ սեկցիաներում, մշակման յենթարկենք արտադրական հայթամթյթման, կազմակերպման, կասղիտալ շինարարության, արտադրանքի վորակի և ինքնարժեքի իջեցման հարցը, վառելիքի ինդիքները՝ ինայորությամբ ծախսելու և նրա արտադրությունն ընդարձակելու մասին, նույնը մետաղի նկատմամբ, աշխատանքի, փինանսական ինդիքները, հաշվարկումն և հաշվետվությունը: Անհրաժեշտ և հաշվի առնել այն ամբողջ ահազին փորձառությունները, վոր ունեն մեր՝ տեղերում աշխատող՝ ընկերները: Թե չեն, մեր մեջ բուն են դրել մի վտա սովորություն. բավական են, վոր մի թուղթ գրես, ուղարկես այն, մանավանդ յեթե դա հեռագիր են, այն ել վոչ թե մեկ, այլ մի 10-20 հասցեներով, և դու հանդիսա սրտով իրավունք են համարում յերազելու, վոր դու ամեն ինչ արդեն արել են և հետեւ վանքների մասին պատասխանավությունը քեզնից վերանում են: Այդպես, իհարկե, չի կարելի: Զենք կարող մենք հանդստացնենք մեղ նրանով, վոր մի ինչ վոր թուղթ ենք ուղարկել: ՃՃկ-ը մի-այն հունվար ամսում ստացել են մոտ 84 հազար թուղթ: Մի՞թե դուք կարծում եք, վոր այդչափի ահազին քանակությամբ թուղթ մենք ի վիճակի յենք կարգավոր և դրանց մի հասկանալի պատասխան տալու: Յերբեք: Յես ուղղակի կասեմ, վոր գրանցից վոչինչ չի գոյանա, բացի գեֆիցիային թղթի փչացումից (տեղից՝ դուք ել զուր եք հայթայթում մեղ այդչափի թուղթ):

Այդ ինդրի մասին յես կխոսեմ: Յես չեմ ուղղում ասել, վոր մեղանում ամեն ինչ լավ են, իսկ ձեզանում՝ վատ: Քավ լիցի: Յես ուղղում եմ միայն ասել, վոր մենք ձեզ հետ միասին, միահամուռ ուժերով պիտի ուղղենք այդ թերությունը:

## ՏՆՏԵՍՍԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇԻՎ ՅԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՑԻՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱԾԻ

Իսկ այժմ թույլ տվեք ինձ կանգ առնել մի քանի ինդիքների վրա, վորոնք հրատապ ընույթ են կրում և կարոտ են անհապաղ լուծման: Առաջին հարցը, վորի վրա ուղղում եմ դարձնել ձեր ուղարկությունը, դա արտադրական հայթայթման ինդիքներ են: Հայթայթման այն սիստեմը, վոր այժմ գոյություն ունի մեղանում, անբավարար են:

Այժմյան սիստեմը հայթայթման դործից ամբողջովին հե-

սացնում և ձեռնարկության դիրեկտորին և ամեն ինչ նրա համար աշխատում և անել հայֆայթման քաժինը։ Զեռնարկության դիրեկտորը անմիջականորեն չփ մասնակցում իր պատվերները բաշխելու գործին։ Բնկ. Ռումյանցեվը, Ուրալնավթի նախագահը, ուստամում եր ինձ, վոր ինքը չգիտե անդամ, թե վոր գործարանում եր իր համար պատվիրած սարքավորումը, և վոր յեթե նա դնա իժորի և Սորմովի գործարանները, վորտեղ կատարվում են նայֆարգյունարերության պատվերները, այնտեղ ել նրան չեն կարող առել, —վո՞րն ե Ուրալի, վո՞րն ե Գրոզնու համար։

Այս որեւս մենք քննում ենք Մազնիտողորսկի և Կուլզնեցկի գործարանների սարքավորման ինդիրը։ Ինչպես եք կարծում, ո՞վ պիտի այս պատվիրի։ Յեթե ինքը շինարարությունը և «լոստոկուսալ»-ը («Արևիլապողպատ») չմտնակցեն ամենաանմիջական կերպով պատվերների բաշխմանը, մշտական հսկողություն չունենան նրանց կատարմանը, շինարարությունը կարող ե մնալ առանց սարքավորման (տեղից՝ «ճիշտ ե»)։ Իսկ փաստորեն այժմո սարքավորման բոլոր պատվերները հանձնվում են միավորմանը (որյուղինենից), իսկ ապա միավորումը պիտի բաժանի այդ պատվերներն իր բոլոր գործարանների մեջ առանց պատվիրող—կլիենտի վորեւ մասնակցության։ Ինքն ըստ ինքան հասկանալի յէ, վոր մենք չենք կարող թույլ տալ յուրաքանչյուր գործարանին, վոր նո ձեռք բերի ինչ վոր նրան հարկավոր ե, ընդհանուր պլանից դուքս, առանց միավորման գիտությամբ։ Այդ անշուշտ վոչ վոք ել չի տուժարկում, սակայն նույնչափ պարզ ե այն, յեթե անմիջական մասնակցություն չունենան պատվիրատու և մատակարարող գործարանները, յեթե պայմանագրում պարզ վորոշված չին նրանց փոխադարձ պարտականությունները, մենք չենք ունենա փոքր ի շատե լուրջ յերաշխիք փոխադարձ պատասխանատվությունները վորոշված ժամկետին կատարելու համար։ Արդյունաբերության կառավարման սիստեմի 1929 թվի վերակադրության ժամանակ հիմնական թեղերից մեկն եր՝ ստեղծել միավորութներ (ՎՃԳԹ-ի մինչեւ այդ գոյություն ունեցող «Գլամի»-երի տեղ), իբրև կազմակերպություններ, վորոնք պիտի գործեն, խոսիվ պահպանելով անտեսավարական հաշվի սկզբունքը։ 1928 թվի գեկրեալ տրեստների և ձեռնարկությունների իրավունքների մասին նույնութեա իր հիմքում ուներ տնտեսավարակում հաջո-

ոկրբումքը։ Նույն վորույլ եր ներշնչված և ՃՃԳԹ-ի վորոշումը ցեխերի մասին։ Իսկ այժմ, թույլ տվեք ինձ հարցնելու, վոր միավորումն մեղանում տնտեսաշվի վրա յէ։ Վո՞ր գործարանն ե մեղանում լիովին և ամբողջովին ղեկավարվում տնտեսաշվով։ Ըստ իշխանությանը, մասնաւոր մատուցումը մատենի մատուցումը, ընկ. դիրեկտորներ, ցեխը գանվում ե տնտեսաշվի վրա։ (տեղից՝ «կա», քիչ են», «չկա»)։

Բնկ. Որջոնիկինան։ —Շա՞տ են։

(Տեղից՝ «Թղթի վրա»)։

Ըստ Որջոնիկինան։ —Դժվար ե համանալ։ Մի քանին ասում են՝ կա, մյուսները՝ քիչ են, իսկ մնացածները՝ թղթի վրա։ Յես կարծում եմ, վոր վերջիններն ավելի մոտ են ճշմարտությանը։ Իսկ չի վոր առանց այդ մենք վոչ մի կերպ չենք կարող յուշ գնուլ։

Մենք խոսում, զրում ենք արտադրանքի վորակի մասին։ Իսկ ինչպես ձեռք բերենք այդ վորակը։ Ինչպես ստանանք այդ։ Առանց անտեսաշվի, առանց պայմանագրերի մեջ մտցված պարտականությունների, առանց վորոշ նյութական պատասխանատվության, վոր պիտի կրեն պայմանագրերը ինքով կողմերը, որու չես առիպի հոգալ վորակի մասին այսպիս, ինչպես այդ հարկն ե։ Իսկ մեղանում այժմ ամեն բանի համար վճարում ե պետքանկը։ Զեռնարկությունը նյութակես վոչ մի բանի համար չի պատասխանում։ Այժմ յանից պիտի լինի վոչ յանուս, ինչպես անցյալ տարին, այլ մի քիչ ուրիշ տեսակ։ Աշխատավարձը վճարում ելին առանց ձեզ, արտադրանքի համար վճարում ելին անկախ նրա վորակից, արտադրանքը վերցնում են ձեզնից և բաշխում։

(Տեղից՝ «Այդ բոլորովին արդեն լավ ե»)։

Բնկ. Որջոնիկինան։ —Ասես, բոլորովին լավ ե։ Իսկ յեթե խոր նայենք, դուքս և դալիս, վոր վատ ե, նույնիսկ շտա վատ։

Ինձ թվում ե ընկերներ, վոր նախ և առաջին հերթին մենք պետք ե ամենահաստատ կիրառենք կյանքում տնտեսահամարությունները։ Յերկրորդը՝ անհրաժեշտ ե, վորպեսդի վորակի և պատվերները ժամանակին կատարելու համար պատասխանատու հանդիպանա մատակարարողը վոչ միահայն իր աղնիվ խոսքով, այլ և նյութակես։ Դե, ի՞նչ միտք ունի, յեթե յես պիտի ստանամ ձեզնից մետաղ չողեկառքեր կառուցող զործարանի համար, իսկ զուք ինձ ուղարկում եք մի ինչ վոր մետաղ, վոր ինձ համար ան-



ողեաք ե : Յես ստացա և նա թափված անգործ մնում է ինձ մոտ և  
յես, նրա հետ վոչինչ չեմ կարող անել . իսկ մի ուրիշ դորժարա-  
նում հենց այդ մետաղի կարիքն է զգացվում : Այդ շատ հաճախ  
ե պատահում մեղանում : Դրան պետք է վերջ գնել : Մենք պետք ե  
ստեղծենք պայմանագրի վրա հիմնված փոխարարելություններ  
և մատակարարողի նյութական պատասխանառությունը ողա-  
վիրատվի առաջ : Պարզ ե , վոր ինչպես յես սասցի , մենք չենք  
կարող թույլ տալ , վոր ամեն մեկը պլանից և լիմիտաներից գուրս  
իր համար մտակարարող փնտրի ամբողջ միության սահման-  
ներում :

Պլանավորումը հիմքն է մեր ժողովրդական տնտեսության։  
Իսկ ինչու չանենք այսպես. յերբ ԺՏԳ-ը վորոշել է արդեն, վոր  
մետաղից մենք ունենք միայն այսքանը, վոր մետաղը սղակուում  
է, անձար ուրեմն պիտի կրծատենք այսինչ միավորման մատակա-  
րաբումը, ուստի պետք է վորոշենք այսինչ միավորմանը՝ տալ  
այնքան, յերրորդին այնքան։ Հետո այդ միավորումներն իրենց  
հատկացված մետաղը բաժանում են իրենց գործարանների մեջ։  
Դրանից հետո մետաղամշակ գործարանի դիրեկտորը մետաղուր-  
գիական գործարանի դիրեկտորի հետ պայմանագիր են կնքում,  
վորի մեջ առված է, թե զուտ ինձ պիտի տաս այսքան մետաղ, այս-  
ինչ քանտակությամբ, այսինչ պլոտիլների, այսինչ ասորախմեն-  
տի, այս ինչ ժամկետին, իսկ յետ քեզ զրա տեղ պիտի վճարեմ այս  
ինչ և այս ինչ։ Յեթե զուտ պայմանավորված ժամկետին մատակա-  
րաբեցիր ամեն ինչ համաձայն կնքված պայմանագրի, գու ստա-  
նում ես համապատասխան վճարու, իսկ յեթե վոչ, այլ կերպ պի-  
տի լինի մեր խսութեքը։ Յեթե զուտ չկատարեցիր ստանձնած պար-  
տականություններդ, յետ քեզ փող չեմ վճարի, բանկն եւ իմ տեղ  
քեզ այլևս չի վճարի, և դու, ընկերութանկադին, ստիպված պի-  
տի խոր-խոր մտածես քո անելիքի մասին, թե վոնց աշխատավարձ  
ճարես բանվորներիդ և ծառայողներիդ համար, վոնց շարունակի  
չու գործարանն իր աշխատանքը։

Պայմանագրին պիտի տալ որինական բնույթ։ Այ վոր չի կատարում սրբազնագիրը, պատասխանում է խորհրդային դատարանի առաջ։ Դա կտիպի մեղ սրբազնի վորակի համար, հասցնել արտադրանքը ժամանակին, պատշաճ քանակով, ասոր-տիմենտով և կարգապահություն մտցնել։

Ինձ թվում ե , վար դա յե այս ուղղությունը , վորով մենք  
պիտի գտնենք այս խնդրի լուծումը : Մոտ ժամանակներս կառա-  
վարական վորոշումներով ուղղումներ են մտցված մեր վարկային  
ռեֆորմի մեջ : Այդ ուղղումների համաձայն , մատակարարողնե-  
րը քիայն այն զեղքում ստանում են վճարը , յերբ նրանք հան-  
ձնում են վորոշված ժամկետին արտադրանքն այն վորակի և այն  
քանակով վոր նրանք պարտավորվել են հանձնել : Միայս չ-  
նից հետո դնորդը կարգադրում ե բանկին վճարել դրամը :

Իսկ մինչ այժմ՝ բանկը կարող էր առանց ձեր գիտության վճարել։ Իսկ այժմ առանց ձեր անմիջական հրամանի վոչ վոք և վոչ մի կոպեկ ձեր ընթացիկ հաշվեց չի կարող դուրս հանել։ (Մա-փահարություններ)։ Մեզ թվում ե, վոր այդ տեսակ վայրությունը, և յեթե դրան ել ավելացնենք սայմանագիրը չկատարողի համար նախատեսնելած տուղանքը, — այդ բավականի պիտի զգաստացնի մեզ։ Ահա այստեղ ե, վոր կսկսվի սայքարը վորակի համար։ Այդ խնդիրը կարգին պիտի ծեծենք մեր սեկցիայում և գտնենք նրա գործնական բաղկաց լուծումը։ Մենք պետք ե սայմանագրեր կըն-քենք նաև առանձին յերկաթուղիների հետ։ (Մափահարություններ)։ Յեթե մենք ժամանակին չենք պարզում վագոնները, շամանակին չենք պարզում, իսկ յեթե նա ինքը ժամա-նակը մեզ տուցի յէ յենթարկում, իսկ յեթե նա ինքը ժամա-նակին չի հասցնում թեռները, այդ դեպքում վո՞նց անենք։ Պա-տասխանատվությունը թող լինի յերկու կողմի համար ել։ (Մա-փահարություններ)։

ԲՈՅԼԵՎԻԿԱՐԵՆ ԱՆՑԿԱՅՆԵԼ ԿՈՊԻՏԱԼ  
ՃԵՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետեւյալ հարցը, ընկերներ, զորի վրա յես ուղղամբ եմ կանգ առնել, — զա կապիտալ շինարարության խնդիրն է։ Մեայն այն արլյումարերության մեջ, զոր պլանավորում ե ժՏԿ-ը, ելեք- տոնֆիկացիայի հետ միասին հաշված, մենք ներդրում ենք կա- տարում 6.783 միլիոն ռուբլու չափով։ Նպատակահարմար կեր- պով և տնօտեսորեն մուծել շինարարության մեջ այդ միլիոնդ- ները՝ զա կնշանակի մեծ գործ կատարել։ Զնայած շինարարու- թյան մեջ մեր տնեցած անպայման մեծ նվաճումներին, պետք է սակայն խստովանել, զոր մենք մինչեւ որս կառուցում ենք շատ թանը և բավականին դանդաղ։ Հաճախ մենք կառուցում ենք այն-

սղիսի ոլտոներ, վոր հայտնի չե, թէ դա բնակելու չենք ենք չե-  
նում, թէ ամրոց:

Յես փորձ արի պարզելու իրերի գրությունը շինարարատ-  
կան նախահաշխմների նկատմամբ : Ասես, ամենատարրատկան բան  
պիտի լինի՝ յեթե կառուցում ես, պետք է նախահաշխվ ունենաս :  
Վոչ մի կապիտալիստ, վոչ մի դործարան, վոչ մի ֆաբրիկա,  
վոչ մի ցեխ առանց շինարարական նախահաշխվի չի կառուցի : Ա-  
սացեք, ընկերներ, ունե՞ք ձեզ շինարարական նախահաշխվներ  
(Աղմուկ : Բացականչություններ՝ «Ունենք», «Զունենք») : Մի  
ընկերոջ, վոչ վաստ կառուցողի, յս մի անդամ հարց տվի՝  
— Ասա, եդ վո՞նց ես կառուցում, ունե՞ս արդյոք շինարա-  
րական նախահաշխվի :

Նա պատասխանեց՝  
— Նախահաջիվ յես, Ճիշտ է, չունեմ, առկայն տեխնիքա-  
կան-անտեսական հիմնակողութ աւնեմ:

Իսկ տեխնիքական տնտեսական հիմնավորութով նպաստեալ է շինարարության վոքքը ի շատե ծշդրիտ արժեքը՝ անհնարին և կարելի յե այդ հիման վրա կառուցել և 100 և 200 տոկոսով ավել կամ պակաս։ Ինչ և ներկայացնում այն «Ուրոչնոյե Պոլոտենին»-ն ( Ս ր օ ւ ո ւ Պ ո լ օ յ ե ն ) , վորով զեկավարվում ենք նախահամաշվիները կազմելիս։ Գոյություն ունի՝ արդյոք այն ուրիշ յերկրը ներում։ Մեր լավագույն կառուցող-լինֆեներները, վորոնց հետ զրուցել եմ այդ մասին, պատասխանում են միաձայն՝ վոչ մի յերկրում բացի մեզանից նման «Ուրոչնոյե Պոլոտենին» զոյություն չունի։ (Ծիծաղ)։ Այստեղ արտասահմանում յուրաքանչյուր Փիբ-մա իր համար սեփական նորմաներ ունի։ Ամերիկայում դրյություն ունի մի այնպիսի բան, վորով կարող են ամենքը ոգտվել։ Այն «Ուրոչնոյե Պոլոտենին»-ն, վորով մենք ոգտվում ենք, առաջին խմբագրությամբ կազմված ե... 1843 թվին զինվորական ժամերի ուժով կատարվող աշխատանքների համար։ Հետո, 1869 թվին, «Պոլոտենին»-ն վերանայվել ե և հաստատվել «Նորին կայսերական Ալեքսանդր յերկրորդի սեփական ստորագրությամբ», «Յեղիցե ըստ սմին»։ (Ծիծաղ)։ Այս դրյության մեջ նորմաները հասան մինչեւ 1905 թ. հեղափոխությունը։ Սույն գարի սկզբաներում կոմս Դը-Ռուշֆորը հիշյալ նորմաները լրա-

ցըեց Ֆէկտորություններով և ուղղումներով։ Հեղափօխությունից հետո, 7-ժամյա աշխատանքը ուժի մեջ մտնելուն պես, հին, նորմաները վերանայվեցին և մուծվեցին լրացուցիչ կոյեփիցնաներ։ Մետրիքական սիստեմը կիրառելիս, «Ուրոշնոյե Պոլոժենիյե»-ն և հին և Յեվ ուհա այդ հինավորց «Ուր. Պոլոժենիյե»-յի հիման վրա կադմում են մեր նախահաշխիները։ 1925 թվին այս դործը յենթարկվեց վերաքննության, հրատարակեցին մոտ 40 դիրք, ծախոցին մոտ 5 ժիլիոն ոռութիւն, սակայն վոչ մի ողում դրանից չոտացվեց։ Դուրս ե գալիս, վոր մեր առաջավոր շինարարություններն իրենց նախահաշխիները կազմում են, ոեկավարվելով այն «Ուր. Պոլոժենիյե»-յով, վորը 1869 թ. հաստատվել և «Նորին կայսերական Մեծության Ալեքսանդր 2-րդի սեփական ստորագրությամբ»։ Գրողը տանի եղ Ալեքսանդր 2-րդին, վորը «բարեհաճել ե» հաստատել «Ուր. Պոլոժենիյե»-ն։ Սակայն մինչեւ յերբ պիտի գոյություն աւնենա այդ անիծյալ «Ուր. Պոլոժենիյեն»։ Այստեղ ակամահիշում ես Վլադիմիր Իլիչի խոսքերը. նո գրում ե. «Մենք մեծ հեղափոխականներ ենք, իսկ ինչ վոր մի դատարկ թղթի առաջ անողնական ենք գառնում»։ Մենք հավաքել ենք այժմ 50 ինժեներ և պատվիրել, վորպեսզի կազմեն մեր արդի տեխնիկայի համապատասխան «Պոլոժենիյե» (կանոնադրություն)։ (Տեղից ձայն՝ «Յեվ այնուամենայիվ նոր «Պոլոժենիյե»-ի հիմքը գննին հին «Ուր. Պոլոժենիյե»-ն)։ Վոչ, չեն դնի։ Եյն սենյակը, վորտեղ աշխատելիս կլինեն այն ընկերությը, մենք կարգելենք քարշ տալ այն դիրքը։ Ի՞նչ ե ստացվում սակայն այս բանից։ Այն, վոր մինչեւ այժմ այս դրաբի հիման վրա հաշխիներ են կազմում, սրինակ, բետոն դնելու նկատմամբ և այլն։ Յեթե վերցնենք մեր լավագույն շինարարությունները, մենք կտեսնենք, վոր այնտեղ բանուժի հաշվարկումը բետոնը խառնելու, աղյուսներ դնելու նկատմամբ և այլն կատարվում ե 60-ական թվակններին յեղած տեխնիկայի հիման վրա, յերբ, —այդ ուղղակի կարելի յետեղ, — մեղանում վոչ մի տեխնիկայի մասին առհասարակ խոսք չեք կարող լինել։ Խոկ այժմ, յեթե վերցնենք, որինակ, Դնելորոտարոյը, այնտեղ

